ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

6 ապրիլ, 2026 թվականի № 32-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 136-Ա որոշմամբ, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2026 թվականի ապրիլի 1-ի N-ՀՄ-02/150/26 գրությունը և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2026 թվականի ապրիլի 2-ի N Ռ/26 01-053 գրությունը և հաշվի առնելով գործող իրավակարգավորումները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացնել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2026 թվականի ապրիլի 1-ի N-ՀՄ-02/150/26 գրությամբ Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված՝ Հանրային հեռարձակողի կողմից 2026 թվականի առաջին եռամսյակի ընթացքում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը:

2. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացնել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2026 թվականի ապրիլի 2-ի N Ռ/26 01-053 գրությամբ Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված՝ Հանրային հեռարձակողի կողմից 2026 թվականի առաջին եռամսյակի ընթացքում տեղեկատվական, կրթական,

մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

6 ապրիլ, 2026 թվականի

ք. Երևան